

ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՆԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՍԿՋԲՈՒՆՔԻ
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կ. Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Միջազգային իրավունքի հիմնական սկզբունքները պետությունների փոխ-հարաբերությունների կարգավորման գործում միշտ էլ կարևոր դեր են խաղացել: Այդ կարևորությունը հատկապես զգացվում է ներկա դարաշրջանում՝ երկու տարբեր հասարակական սիստեմների պետությունների խաղաղ գոյակցությունը ապահովելու գործում: Այս հանգամանքը հրամայաբար պահանջում է վերջնականապես սահմանելու հիմնական սկզբունքների հասկացությունն ու որոշակի դարձնելու նրանց իրավաբանական բովանդակությունը: Իսկ դրա համար, արդյո՞ք, բավական կլինի ասել, որ միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքները հանդիսանում են նրա հիմնադիր նորմերը¹:

Այս տեսակետը, սկզբունքորեն ճիշտ լինելով հանդերձ, թվում է, որ սպառնիչ կարող համարվել: Զե՞ որ ինչպես ներպետական իրավունքը, միջազգային իրավունքը նույնպես դասակարգային հասարակարգի կատեգորիա է: Հետևաբար, ինչպես միջազգային իրավունքը, այնպես էլ նրա հիմնական սկզբունքների բովանդակությունն ու հիմքը պետք է փնտրել ոչ թե «մարդու բնության» մեջ, այլ հասարակության տնտեսական հիմքի օրինաչափ զարգացման մեջ, քանի որ հասարակության կյանքի նյութական պայմաններով է պայմանավորված ողջ վերնաշենքը, այդ թվում, նրա մասը կազմող միջազգային իրավունքը:

Իրավունքի, այդ թվում, միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների նորմատիվության հարցը որոշակի ձևով ևն դնում սովետական իրավաբան-միջազգայնագետները, և այդ հարցում տարածայնությունները սկզբունքային բնույթ չեն կրում: «Իրավունքի սկզբունքները, այդ թվում, հիմնական սկզբունքները նորմատիվ բնույթ ունեն»², գրում է պրոֆ. Ռ. Ն. Բորբովը: Նա միաժամանակ ճիշտ է նկատում, որ իրավունքի, այդ թվում, միջազգային իրավունքի հիմնական սկզբունքները չի կարելի դիտել որպես «ղեկավար իդեաներ» ու «որակական առանձնահատկություններ» արտահայտող կատեգորիաներ: Եվ, ընդհանրապես, իրավունքի սկզբունքի էությունը նորմատիվությունից զատ ինչ-որ այլ հասկացություններ վերագրելը որևէ ձևով հիմնավորված չէ: Միջազգային իրավական նորմի ստեղծման մեջ օրենսդրի փոխարեն հանդես է դալիս պետությունների համաձայնությունը՝ պայմանագրի կամ սովորույթի ձևով: Իսկ միջազգային իրավունքի սկզբունքները, վերջին հաշվով, իրենց մեջ մարմնավորում են աշխարհի ժողովրդական լայն զանգվածների առաջադեմ դեմոկրատական գաղափարներ: Այդ պատճառով էլ հիմնական սկզբունքները

¹ И. П. Блищенко, В. Н. Дурденевский, Дипломатическое и консульское право, М., 1962, стр. 16.

² Р. Л. Бобров, Основные проблемы теории международного права, М., 1968, стр. 192.

միջազգային իրավունքի սովորական նորմերի համար յուրատեսակ չափանիշ են ճանաչվում: Վերջիններս չպետք է հակասեն հիմնական սկզբունքներին: Միջազգային իրավունքի բուրժուական գիտության մեջ լայն տարածում է գտել այն դոկտրինան (վարդապետությունը), որի համաձայն, որոշակի թվով պետությունների կողմից ընդունված միջազգային իրավունքի սովորական նորմերը պարտադիր ուժ ունեն նաև մնացած բոլոր պետությունների համար (Ռ. Կուադրի, Օ. Լիսիցին, Պ. Հուգենհայմ, Սերենի, Ս. Ֆերդրոս, Կելսեն և այլն)³:

Նման կոնցեպցիան հակասության մեջ է միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների և հատկապես պետությունների իրավահավասարության սկզբունքի հետ: Վերջինս դիտվել և դիտվում է միայն որպես պետությունների իրավաբանական և ոչ թե՛ փաստական իրավահավասարություն: Հենց իրավահավասարության այդ զուտ իրավաբանական կողմն է, որի հետ պարտադիր կարգով պետք է հաշվի նստել ինչպես միջազգային իրավունքի նոր նորմեր ստեղծելիս, այնպես էլ արդեն իսկ գոյություն ունեցող նորմերի համապարտադիր բնույթի հետ կապված հարցեր լուծելիս: Դա նշանակում է, որ միջազգային հարաբերություններում պետությունների և ոչ մի խումբ չի կարող ստեղծել այնպիսի միջազգային իրավական նորմ, որը պարտադիր լինի այդ խմբի մեջ չմտնող այլ պետությունների համար: Այդ սկզբունքով էլ հենց կանխվում է նման նորմերի բռնի արհեստական պարտադրումը:

Այս հարցն առանձնակի սրությամբ է դրվում հատկապես այժմ, երբ մեկ ընդհանուր միջազգային իրավունքն իր հիմնական սկզբունքներով ու դրույթներով ժառանգում է երկու տարբեր սոցիալ-տնտեսական համակարգերի պետությունների փոխհարաբերությունների կարգավորման գործին:

Միջազգային իրավունքի ինչպես հիմնական նորմերը կամ սկզբունքները, այնպես էլ սովորական նորմերը կարող են ընդունվել և փոփոխվել, որպես կանոն, երկու ձևով՝ պայմանագրի և սովորույթի, ինչպես նկատել է պրոֆ. Գ. Ի. Տունկինը⁴: Այս ձևերը պարտադիր են բոլոր սովերեն պետությունների համար, և այդ հարցում տարածայնություններ համարյա չկան: Սակայն կյանքը ցույց է տալիս, որ հզոր տերությունները միշտ էլ առանձնահատուկ դեր են խաղացել ինչպիսի միջազգային փոխհարաբերություններում ընդհանրապես, այնպես էլ միջազգային-իրավական հիմնական սկզբունքների ստեղծման հարցում:

Այդ դերը ժամանակակից միջազգային իրավունքում վերջին հաշվով պայմանավորված է պետությունների սովերենության հարգման ու իրավահավասարության սկզբունքներով (խոսքը վերաբերում է հարցի իրավաբանական կողմին), որոնցից բխում է, որ նոր միջազգային-իրավական նորմը չի կարող բռնությամբ պարտադրվել որևէ պետության: Միանգամայն բնական է, որ այս կամ այն պետության կամքը նախ չի կարող ստեղծել միջազգային-իրավական նորմ և ապա չի կարելի պատկերացնել ազգային այնպիսի իշխանություն, որ ընդունի բոլոր պետությունների համար համապարտադիր նորմեր: Դրանք կարող են ստեղծվել սոսկ միջազգային իրավունքի սուբյեկտների համաձայնության ուժով:

Եթե միջազգային իրավունքի հիմնական և սովորական նորմերի ձևավորման ու փոփոխման եղանակները նույնն են, ապա դա չի կարելի ասել նրանց

³ Տե՛ս Գ. Ի. Тункин, Теория международного права, М., 1970, стр. 137—152.

⁴ Նույն տեղում, էջ 183:

դերի ու նշանակություն մասին, հատկապես, երբ խոսքը վերաբերում է միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներին: Պրոֆ. Գ. Ի. Տունկինի և մյուսների ալն տեսակետը, որ միջազգային իրավունքի սկզբունքները, վերջին հաշվով, հանդիսանում են միջազգային-իրավական նորմեր, միաժամանակ նշանակում է, որ միջազգային իրավունքին, ինչպես նաև հիմնական սկզբունքներին, հատուկ են ալն բոլոր բնորոշ առանձնահատկությունները, որոնք հատուկ են նաև միջազգային իրավունքի սովորական նորմերին ընդհանրապես: Ճիշտ է, միջազգային իրավունքի սկզբունքը «ոչ թե ինչ որ պարզ հասկացություն կամ գաղափար է, այլ՝ նորմ է»⁵, սակայն դա ոչ թե սովորական, այլ բարձրագույն նորմ է: Ավելին. միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներն ունիվերսալ նորմեր են, որոնք ընդգծում են միջազգային հարաբերություններում պետությունների վարքագծի ամենաբնորոշ, ամենակարևոր և ամենահիմնական կողմերը: Ուստի չի կարելի ենթադրել, որ միջազգային իրավունքի ցանկացած նորմ կարող է կազմել նրա հիմնական սկզբունքը: Հիմնական սկզբունքներն օժտված են մի շարք առանձնահատկություններով, որոնք յուրահատուկ չեն սովորական նորմերին: Այդ առանձնահատկությունները, մեր կարծիքով, հատկապես ճիշտ է սահմանել Ա. Ն. Տալալաևը. «ամենակարևոր, ամենաընդհանուր և համընդհանուր ճանաչման արժանացած նորմեր»⁶:

Պրոֆ. Ռ. Լ. Բորրովը համաձայն չէ այս բնորոշման վերջին մասի հետ՝ «համընդհանուր ճանաչման» հատկանիշին: Նա գտնում է, որ կարող են համընդհանուր ճանաչման արժանանալ նաև միջազգային իրավունքի սովորական, պարզունակ նորմերը, որոնք կարգավորում են միջազգային հարաբերությունների այս կամ այն կողմերի բնագավառը, ասենք, միջազգային առևտրի կամ ծովազնացության հարցերը կարգավորող նորմերը: «Դրանով իսկ, — դրում է հեղինակը, — համընդհանուր ճանաչումը չի կարող ունենալ դասակարգման հատկանիշ՝ հիմնական սկզբունքները ցանկացած սովորական նորմայից տարբերելու համար»⁷:

Հարց է ծագում, եթե միջազգային հարաբերությունների որևէ կոնկրետ բնագավառ կարգավորող նորմերը կարող են և պետք է համընդհանուր ճանաչման արժանանան, կամ եթե այսպիսի հարաբերություններում հիմնական սկզբունք միջազգային իրավունքի տվյալ համակարգում համընդհանուր ճանաչված սկզբունք է, ապա ինչպես այդ «համընդհանուր ճանաչման» հատկանիշը չի կարող հիմնական սկզբունքի բնորոշման մեջ որոշիչ դեր խաղալ: Չէ՞ որ վերջին հաշվով միջազգային իրավունքի հիմնական սկզբունքը լիարժեք համընդհանուր ճանաչման արժանացած «ամենակարևոր», «ամենաընդհանուր» ու հիմնական իրավական նորմն է: Մեր կարծիքով Ա. Ն. Տալալաևի առաջ քաշած երեք հատկանիշներն էլ սերտորեն կապված են միմյանց հետ ներքին տրամաբանական կապով և նրանցից որևէ մեկի անտեսումը կարող է հանգեցնել միջազգային իրավունքի հիմնական սկզբունքի հասկացության ոչ լիովին բացահայտմանը: Պատահական չէ, որ միջազգային իրավունքին նվիրված սովետական գրականության մեջ հաճախ «միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների» փոխարեն

⁵ А. Н. Талалаев, Об основных принципах международного права, «Советский ежегодник международного права 1958 г.», М., 1959, стр. 513.

⁶ Նույն տեղում:

⁷ Р. Л. Боров, Современное международное право, Л., 1962, стр. 74.

նույն նպատակով օգտագործված է «Ժամանակակից միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչման արժանացած սկզբունքներ» հասկացությունը⁸։ Այնպիսին մեր կարծիքով «Համընդհանուր ճանաչման» տարրը եղածների մեջ կարևորն է այն առումով, որ առանց այդ որակավորման ամենակարևոր նորմն էլ դեռ չի կարող դիտվել իբրև միջազգային իրավունքի հիմնական սկզբունք։ Այսպես, օրինակ, «երկու հասարակական սիստեմների իրավահավասարություն» դեռ միջազգային իրավունքի հիմնական սկզբունք չի ընդունվել այն պարզ պատճառով, որ միջազգային իրավունքի սուբյեկտների կողմից համընդհանուր ճանաչում չի գտել, չնայած «ամենակարևոր», «ամենաընդհանուր» հատկանիշներն առկա են նրանում։

Հետևաբար, անկախ նրանից, թե ինչպիսին է տվյալ միջազգային իրավական սկզբունքը՝ առաջնակարգ է, թե սովորական, ֆունդամենտալ, թե ոչ հիմնական, այն պետք է համընդհանուր ճանաչման արժանացած լինի պետությունների կողմից։

Միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների մասին հարցի մյուս կարևոր կողմը «իրավունքի ընդհանուր սկզբունքների» պրոբլեմն է, որը եղել և դեռ մնում է բանավեճի առարկա։

Սովետական իրավաբանների մեծ մասի տեսակետով միջազգային-իրավական հարաբերություններում «իրավունքի հիմնական սկզբունքներ» ասելով պետք է հասկանալ հենց միջազգային իրավունքի սկզբունքները։ Այսպես, ակադեմիկոս Վ. Ա. Կորեցկին գրում է, որ «իրավունքի ընդհանուր սկզբունքները միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներն են»⁹։ Նույն միտքն է արտահայտում պրոֆ. Վ. Ն. Դուրդենևսկին։ «Իրավունքի ընդհանուր սկզբունքները, — գրում է նա, — իրենց բնույթով միջազգային իրավունքի միևնույն հիմնական սկզբունքներն են»¹⁰։

Համաման տեսակետ են պաշտպանում Դ. Բ. Լեինը, Գ. Ի. Տունկինը, Ն. Մ. Մինասյանը և շատ ուրիշներ։ Քանի որ «իրավունքի ընդհանուր սկզբունքների» հարցը հիմնականում կապված է Միավորված ազգերի կազմակերպության միջազգային դատարանի (իսկ մինչ այդ Միջազգային արդարադատության մըշտական պալատի) կանոնադրության 38-րդ հոդվածի բովանդակության¹¹ հետ, ուստի բուրժուական տեսաբանները ձգտում են աղավաղել այդ սկզբունքների էությունը, որպեսզի ուզած պահին ցանկացած ձևով մեկնաբանեն դատարանի կանոնադրության այդ կարևոր հոդվածը, եթե դա է պահանջում բուրժուական պետության շահերը։ Այսպես, իտալացի Դ. Անցիլոտտին գտնում է, որ «ինչ վերաբերում է իրավունքի ընդհանուր սկզբունքներին, որոնց մասին խոսվում է միջազգային արդարադատության մշտական պալատի կանոնադրության 38-րդ հ. 3-րդ կետում, պետք է ասել, որ դրանք առաջին հերթին միջազգային

⁸ «Международное право», под ред. проф. Ф. И. Кожевникова, М., 1964, стр. 45; «Курс международного права», под ред. проф. Ф. И. Кожевникова, М., 1966, стр. 46 и др.

⁹ В. М. Корецкий, «Общие принципы права» в международном праве, Киев, 1957, стр. 45.

¹⁰ В. Н. Дурденевский, Пять принципов мирного сосуществования, «Международная жизнь», 1956, № 3, стр. 45.

¹¹ Որոշող ուղղակի ասված է. «Суд,— который обязан решить переданные ему споры на основании международного права,— применяет:

с) общие принципы права, признанные цивилизованными нациями».

իրավունքի ընդհանուր սկզբունքներն են և ապա սկզբունքներ են, ընդունված քաղաքակիրթ ժողովուրդների օրենսդիր մարմինների կողմից»¹²։ Բավական է հիշել, որ «քաղաքակիրթ» կամ «քրիստոնյա» ժողովուրդ կամ պետություն ասելով բուրժուական աշխարհը նկատի ունի սոսկ բուրժուական զարգացած պետությունները, որոնք էլ կազմել են բուրժուական միջազգային իրավունքի բացարձակ ու միակ սուբյեկտները։

Եթե Անցիլոտտին իր տեսակետն ավելի զուսպ ձևով է շարադրում և մանրելու համար նույնիսկ առաջնությունը տալիս է միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներին, ապա իտալացի մեկ ուրիշ գիտնական՝ Գ. Մորելլին, ավելի հեռուն է գնում։ Նա նույնիսկ ավելորդ է համարում խոսել միջազգային իրավունքի սկզբունքների մասին։ Նրա կարծիքով միջազգային դատարանի կանոնադրության 38-րդ հոդվածում ընդհանրապես չի խոսվում միջազգային իրավունքի սկզբունքի մասին։ Ավելին, ըստ Մորելլիի, միջազգային դատարանի 38-րդ հոդվածը լիազորում է դատարանին՝ ազգային իրավունքի սկզբունքներից ստեղծել միջազգային-իրավական նորմեր։ Այստեղ Գ. Մորելլին միտումնավոր ձևով մոռանում է, որ միջազգային դատարանը օրենսդիր մարմին չէ, այն իրավասու չէ ստեղծելու միջազգային իրավունքի նորմեր և սկզբունքներ, այլ կոչված է սոսկ կիրառելու դրանք։

Բացառված չէ, որ միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների ձևավորման վրա իր ազդեցությունն է թողնում ներպետական, ազգային իրավունքը։ Սակայն դա բոլորովին էլ չի նշանակում, թե կարելի է որևէ «քաղաքակիրթ» երկրի ներպետական իրավունքի նորմը մեխանիկորեն փոխադրել միջազգային հարաբերությունների ոլորտը և կիրառել որպես միջազգային իրավական նորմ կամ սկզբունք։ Բուրժուական դրականության մեջ տարածված է, հղել նաև այն կարծիքը, ըստ որի «իրավունքի ընդհանուր սկզբունքները» միջազգային իրավունքի ինքնուրույն աղբյուրներ չեն, քանի որ իբրև թե կաշկանդված են ներպետական իրավունքի ներգործությամբ։ Եղած տեսակետներից այժմ ամենատարածվածները երկուսն են՝ «չափավոր-նորմատիվիստական» և «բնա-իրավական»։ Առաջին ուղղության ներկայացուցիչներից կարելի է հիշատակել շվեյցարական պրոֆ. Պ. Հուգենհայմին և ֆրանսիացի պրոֆ. Շ. Ռուսսոյին, իսկ երկրորդ ուղղության ներկայացուցիչներից՝ ավստրիացի պրոֆեսոր Ա. Ֆերդրոսին¹³։ Կասկածից վեր է, որ «իրավունքի ընդհանուր սկզբունքների» անվան տակ ցանկացած պետության ներպետական իրավունքի նորմը միջազգային դատարանի վզին փաթաթելու բուրժուական գիտնականների բոլոր փորձերը անհիմն են և գիտականորեն սնանկ։ Նման մոտեցումը կարող է միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների ու նորմերի մշակման ու կոդիֆիկացման գործին մեծ վնաս հասցնել։

«Իրավունքի ընդհանուր սկզբունքների» հարցում եղած տարածայնություններն ու հակասություններն ինչ որ չափով պայմանավորված են նաև պետությունների հիմնական իրավունքների ու պարտականությունների պրոբլեմով։ Միջազգային իրավունքի հիմնական սկզբունքի և պետությունների իրավունք-

¹² Д. Анцилотти, Курс международного права, М., 1961, стр. 118—119.

¹³ Այդ ուղղությունների մասին մանրամասն տե՛ս Գ. И. Тупкин, Теория международного права, М. 1970, стр. 216—220.

ների ու պարտականությունների փոխադարձ կապի ու պայմանավորվածության հարցի ճիշտ մեկնաբանումը կօղնի մի կողմից հասկանալու հիմնական սկզբունքների ձևավորման պրոցեսը, մյուս կողմից սահմանելու նրանց կարևորության աստիճանը: Մասնագետների մի մասը հայտնում է այն կարծիքը, որ միջազգային իրավունքի սկզբունքները միաժամանակ պետությունների իրավունքներն ու պարտականություններն են, իսկ գիտնականների մյուս մասը խիստ տարաբաժանում է այդ երկու հասկացությունները:

Ակադեմիկոս Վ. Մ. Կորեցկին նշում է, որ պետությունների հիմնական իրավունքների հիմքում ընկած է՝ պետության սուվերենությունը, որը և կազմում է «մնացած բոլոր իրավունքների կմախքը»¹⁴: Դրա հետ մեկտեղ հեղինակը պետությունների հիմնական իրավունքներն ու պարտականությունները բխեցնում է միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներից:

Այս հարցում որոշակի է նաև պրոֆ. Լ. Ա. Մոչորյանի տեսակետը: Պետությունների հիմնական իրավունքները, գտնում է նա, բխում են միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներից, որոնց հիման վրա էլ համապատասխան պետությունները ձևոք են բերում կոնկրետ իրավունքներ ու ստանձնում համապատասխան պարտականություններ: «Միջազգային իրավունքի սուբյեկտների հիմնական իրավունքները, — շարունակում է հեղինակը, — սահմանվում են նույն միջազգային իրավունքի սուբյեկտների կողմից»¹⁵: Լ. Ա. Մոչորյանը նշում է, որ ինչպես պետությունների իրավունքներն, այնպես էլ պարտականությունները «կազմում են միջազգային իրավունքի հիմնական սկզբունքները, որոնց հիման վրա էլ զարգանում է պետությունների ու ազգերի միջազգային իրավական գործունեությունը»¹⁶:

Ղեկավարվելով այս սկզբունքով, պրոֆ. Լ. Ա. Մոչորյանը կազմում է պետությունների հիմնական իրավունքների ցանկ, որտեղ առաջինը շեշտում է «պետությունների սուվերեն իրավահավասարության»¹⁷ կամ «պետությունների և ազգերի իրավահավասարության»¹⁸ իրավունքը: Զի կարելի չհամաձայնվել նման հարցադրման հետ, քանի որ հեղինակն իրավամբ պետությունների համար «միջազգային հատկանիշ» է ճանաչում ոչ միայն սուվերենությունը, այլև իրավահավասարությունը: Ինչպես գրում է ռուս պրոֆ. Ֆ. Ֆ. Մարտենսը՝ «պետությունների միջազգային հատկանիշների տակ մենք հասկանում ենք պետությանը ներհատուկ որակ, առանց որի նրանք անիմաստ են միջազգային հարաբերություններում և որոնց վրա սկզբնավորվում են նրանց փոխադարձ իրավունքները»¹⁹: Այստեղ էլ պետությունների «միջազգային հատկանիշների շար-

¹⁴ В. М. Корецкий, Проблема «основных прав и обязанностей государств», «Советский ежегодник международного права, 1958 г.», М., 1959, стр. 77.

¹⁵ Л. А. Моджорян, Основные права и обязанности субъектов международного права, там же, стр. 280.

¹⁶ Նույն տեղում, էջ 282:

¹⁷ Л. А. Моджорян, Основные права и обязанности государств, М., 1963, стр. 156.

¹⁸ Л. А. Моджорян, Основные права и обязанности субъектов международного права, стр. 280.

¹⁹ Ф. Ф. Мартенс, Современное международное право цивилизованных народов, СПб, 1887, т. I, стр. 285.

քին առաջին հերթին դասվում են նրանց սովերենությունը և իրավահավասարությունը²⁰։

Միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների և պետությունների իրավունքների ու պարտականությունների փոխադարձ կապն ու պայմանավորվածությունը ենթադրում է ոչ միայն իրավունքների ու համապատասխան սկզբունքների մեխանիկական զուգորդում, այլև նրանց բովանդակության լիակատար համապատասխանություն ժամանակի և տարածության մեջ։ Պետությունների իրավահավասարության և սովերենության միջազգային-իրավական սկզբունքներն իրենց զարգացման ճանապարհին այս կամ այն օրյակտիվ և սուբյեկտիվ պատճառներով ապրել են և՛ վերելք, և՛ վայրէջք։ Համապատասխանաբար էլ նեղացվել կամ ոտնահարվել են պետությունների իրավահավասարության և սովերենության իրավունքները, կամ ընդհակառակը՝ ընդլայնվել և զարգացել են այդ իրավունքներն ու մեծացել դրանցից բխող պարտականությունների շրջանակը։ Այնպես որ ներքին տրամաբանական կապը միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների ու պարտականությունների իրավունքների միջև պատճառաբանված է հասարակական կյանքի զարգացման օրյակտիվ օրինաչափություններով։

Այսպիսով, վերը շարադրվածից կարելի է եզրակացնել, որ պետությունների իրավահավասարության սկզբունքը միջազգային իրավունքի ամենակարևոր, ամենաընդհանուր ու համընդհանուր ճանաչման արժանացած նորմերից այն համակցությունն է, որը կոչված է ապահովելու պետությունների իրավաբանական հավասարությունը միջազգային փոխհարաբերություններում։

Միջազգային իրավունքի մինչհիստեմբերյան շրջանի բազմաթիվ մասնագետներ այս կամ այն առիթով անդրադարձել են պետությունների իրավահավասարության միջազգային-իրավական սկզբունքին ու ընդգծել նրա քաղաքական, տեսական և գործնական մեծ նշանակությունը։ Սակայն նրանցից շատ քչերն են պատշաճ ուշադրություն դարձրել այդ սկզբունքի բովանդակության ձևավորման հարցերին։ Դա բացատրվում է ամենից եռաջ նրանով, որ մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը պետությունների իրավահավասարության սկզբունքը զուտ ձևական բնույթ էր կրում և շատ ժամանակ դիտվում էր որպես «անհասանելի (նույնիսկ անհասկանալի) պատրանք և անհեթեթություն»²¹։ Բացի դրանից իրավահավասարության սկզբունքի բովանդակության գիտական մեկնաբանումը ձեռնարկել էր միջազգային-քաղաքական կյանքում եղանակ բռնող մի խումբ հզոր տևություններին, որոնք դեմ էին նույնիսկ ձևական իրավահավասարությանը։ Այս ուղղությամբ բուրժուական առանձին գիտնականների կատարած փորձերը սոսկ կարող էին բավարարել այդ սկզբունքի ձևական կիրառման պահանջները, քանզի նրանց հետաքրքրում էր իրավահավասարության սկզբունքի միայն քաղաքական կողմը և ոչ երբեք՝ իրավաբանական բովանդակությունն ու դրանից բխող հետևանքները։ Այս միտքն է հաստատում ռուս պրոֆ. է. Վ. Գրաբարը, գրելով, որ «իրավահավասարության սկզբունքի կողմնակիցների փաստարկներում ավելի շատ քաղաքական տարրն

²⁰ Նույն տեղում։

²¹ Այդ մասին տես անգլիացի Ա. Ռոսսի դատադրությունը. «Советский ежегодник международного права 1958 г.», М., 1959, стр. 79.

է, քան իրավաբանականը»²², Մեկ այլ մասնագետ՝ Ա. Ա. Տրեպլինը, խոսելով պետությունների իրավահավասարության իրավաբանական բովանդակության մասին, գրում է. «Անկախ պետությունների իրավահավասարությունը... գործնականում արտահայտվում է հետևյալում. 1. Բոլոր անկախ պետությունների իրավահավասարության ճանաչումը ծովում՝ արտահայտված ծովային բոլոր ծիսակատարություններում: 2. Միջազգային բոլոր կոնգրեսներում ու կոնֆերանսներում մասնակից պետությունները ունեն միայն մեկական ձայն»²³:

Չնչին տարբերությամբ նույն բովանդակությունն ունեն իրավահավասարության սկզբունքի վերաբերյալ պրոֆեսորներ՝ Ա. Հեֆտերի, Ֆրանց Լիստի, Ի. Ա. Օվչիննիկովի, Լ. Օսլենհեյմի, Չ. Հայդի մեկնաբանությունները²⁴: Միջազգային իրավունքի միջհոգեմբերյան գիտության մեջ այդ իրավունքի դեմոկրատական սկզբունքների և հատկապես պետությունների իրավահավասարության սկզբունքի բովանդակությունը սեղմվում, նեղացվում էր հոգուտ այնպիսի սկզբունքների և ինստիտուտների ընդլայնման, ինչպիսիք էին՝ պետությունների պատերազմի իրավունքը, կապիտուլյացիաների ռեժիմը, հյուպատոսական իրավասությունը և այլն, որոնք միշտ էլ կոչված են եղել արդարացնելու կապիտալիզմի նվաճողական ու թալանչիական քաղաքականությունը:

Հոգեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը միջազգային իրավունքի դեմոկրատական սկզբունքների ամրապնդման ու զարգացման հետ միասին լայն հնարավորություններ ստեղծեց այդ սկզբունքների, դրանց թվում՝ պետությունների իրավահավասարության սկզբունքի, իրավաբանական բովանդակության բացահայտման և գիտական մեկնաբանման համար:

Սովետական պրոֆ. Գ. Ի. Տունկինը իրավացիորեն գրում է, որ միջազգային իրավունքի նորմերը, հետևաբար, նաև հիմնական սկզբունքներն ունեն սոցիալական բովանդակություն և երբեք էլ դրանք տեխնիկական վարքագծի կանոններ չեն, ինչպես դանկանում են ապացուցել բուրժուական որոշ գիտնականներ: «Միջազգային իրավունքի սուբյեկտները, — իր միտքը զարգացնում է գիտնականը, — սոցիալական կազմավորումներ են և նրանց կամքն ու գործողություններն ունեն հասարակական նշանակություն, դրանով իսկ միջազգային իրավունքի նորմերը անխուսափելիորեն ունեն սոցիալական բովանդակություն, նորմի բովանդակությունը կազմող վարքագծի կանոնները նույնպես սոցիալական են»²⁵:

Իրավական նորմի կամ հիմնական սկզբունքի սոցիալական բովանդակությունն էլ հենց կազմում է նրա իրավաբանական բովանդակության աղբյուրը: Միջազգային իրավունքի այս կամ այն սկզբունքի կամ իրավական նորմի իրա-

²² Ըստ Ա. Ա. Կորժի *Принцип равенства государств в современном международном праве* գրքի, СПб, 1914, էջ 10.

²³ А. А. Треплин, К вопросу о правах государств в международном Союзе, М., 1906, стр. 86.

²⁴ А. В. Гефтер, Европейское международное право, СПб, 1880, стр. 51; Франц Лист, Международное право в систематическом изложении, СПб, 1917, стр. 81; И. А. Овчинников, Международное право, СПб, стр. 152; Л. Оппенгейм, Международное право, М., 1948, т. I, стр. 245, 248; Ч. Хайд, Международное право, его понимание и применение Соединенными Штатами Америки, М., 1950 г., т. I, стр. 95.

²⁵ Г. И. Тукин, Идеологическая борьба и международное право, М., 1967, стр. 25—26.

վաբանական արժեքը որոշվում է նրանով, թե դրանք որքանով են համապատասխանում միջազգային համայնքի օբյեկտիվ պահանջմունքներին, որքանով են ապահովում խաղաղ գոյակցության իրականացումը տարբեր սոցիալական կարգ ունեցող պետությունների միջև: Որպեսզի նման համապատասխանելիությունը լիարժեք լինի և բավարարի միջազգային իրավունքի ժամանակակից պահանջներին, իրավական նորմը կամ հիմնական սկզբունքը պետք է պետությունների կամաարտահայտություն ձևով արտահայտի առաջավոր մարդկության իրավագիտությունն ու ծառայի խաղաղասիրական ձգտումների ու ցանկությունների իրականացմանը²⁶:

Այսպիսով, պետությունների իրավահավասարության սկզբունքի իրավաբանական բովանդակությունը պայմանավորված է պետությունների ու ժողովուրդների խաղաղ գոյակցության ու փոխադարձ ըմբռնման կոնկրետ պայմաններով:

Չնայած սովետական հեղինակները միշտ էլ ձգտել են բազմակողմանիորեն պարզաբանել ու հարստացնել այդ սկզբունքի բովանդակությունը, այդ հարցում կան դեռևս տարաձայնություններ ու իրարամերժ մեկնաբանություններ: Այդ բանն առավել ցայտուն ձևով արտահայտվեց ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1962 թ. սեսիայում, ուր քննարկվում էր ժամանակակից միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների մասին Չեխոսլովակյան Սոցիալիստական Հանրապետության ներկայացրած դեկլարացիայի նախագիծը: Միայն սոցիալիստական ու շեզոք պետությունների ակտիվ գործունեության շնորհիվ 1962 թ. դեկտեմբերի 18-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան ընդունեց բանաձև (1815—XVII) խաղաղ գոյակցության հիմնական սկզբունքները համակարգելու մասին:

Պետությունների սուվերեն իրավահավասարության սկզբունքի բովանդակության մեկնաբանումը պաշտոնական մակարդակով միջազգային իրավունքի պատմության մեջ առաջին անգամ տրվեց ՄԱԿ-ի կանոնադրության ընդունման ժամանակ, 1945 թ. Սան-Ֆրանցիսկոյում, որտեղ արձանագրվեց, որ «Սուվերեն իրավահավասարության սկզբունքի տակ պետք է հասկանալ. 1) պետությունները իրավաբանորեն հավասար են, 2) նրանք օգտվում են իրենց սուվերենությունից բխող բոլոր իրավունքներից, 3) պետության անհատականությունը (անձը) պետք է հարգվի այնպես, ինչպես նրա տերիտորիալ ամբողջականությունն ու քաղաքական անկախությունը, 4) միջազգային համայնքի ներսում պետությունը պարտավոր է բարեխղճորեն կատարել իր պարտականություններն ու միջազգային պարտավորությունները:

Ամենախտացված ձևով այս շորս կետերում տրված են պետությունների իրավահավասարության սկզբունքի բովանդակության հիմնական գծերը: Սակայն նրա սպառիչ շարադրանքը միջազգային իրավունքի տեսության մեջ դեռևս տեղ չի գտել, ընդհանուր հայտարարի չի բերվել: Այսօր էլ ՄԱԿ-ի Հատուկ կոմիտեն մեծ աշխատանքներ է տանում ժամանակակից միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների բովանդակությունների վերջնական մշակման ու դրանց համակարգման ուղղությամբ: Դրա արդյունքը պետք է համարել 1960 թ. ՄԱԿ-ի Հատուկ կոմիտեի մշակած և ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1962 թ. սեսիայում ընդունված միջազգային իրավունքի յոթ հիմնական սկզբունքները:

²⁶ «Курс международного права», под ред. проф. Ф. И. Кожевникова, М., 1966, стр. 44.

ПОНЯТИЕ И СОДЕРЖАНИЕ ПРИНЦИПА РАВНОПРАВИА ГОСУДАРСТВ

К. А. МАНУКЯН

Р е з ю м е

Раскрытие сущности демократических принципов международного права и в том числе принципа равноправия государств является одной из актуальных проблем правовой науки. Принцип равноправия государств тесно связан с другими основными демократическими принципами современного международного права. Только марксизм-ленинизм указал правильный путь раскрытия содержания этого принципа и его правильного определения. Он представляет собой совокупность важнейших, общих и общепризнанных норм международного права, призванных обеспечить юридическое равноправие государств в международных отношениях. Юридическое содержание принципа правового равенства обусловлено его социальной сущностью, выражающейся в форме волеизъявления государств. Попытки буржуазных ученых затушевать социальное содержание принципов равноправия государств лишены всякого основания. Борьба стран социалистической системы и всех миролюбивых государств приводит к дальнейшему официальному признанию всего богатства демократического содержания принципа равноправия государств.